

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: [info@artsakhlib.am](mailto:info@artsakhlib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ  
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ  
ՕՐՐԱՆ

ՀՏԳ- 941 (479.25):325

ԳՄԳ- 63.3(2Հ)+66.3(2Հ)

Շ 973

Գիտաժողովը նվիրվում է

Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝

Արտակ Մադալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝

Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, Վլադիմիր Բարխուդարյան – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, Բաբկեն Հարությունյան – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, Աշոտ Մելքոնյան – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, Ռուբեն Սաֆրաստյան – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, Արարատ Աղասյան – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, Պավել Ավետիսյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ԶԱՂԱԶԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԳ- 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

## ԳՐԻԳՈՐ ՕՐԳՈՅԱՆ

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ

## ՇՈՒՇԻԻ ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ ԹԱՏՐՈՆԸ

XIX դարավերջին և XX դարասկզբին արևելահայ թատերական մշակույթի նշանավոր կենտրոններից մեկը Շուշին էր: Թիֆլիսից ու Բաքվից հետո շեն ու բարգավաճ կյանքով ապրող այս ամառանոցային քաղաքը գրավիչ էր հյուրախաղային դերասանախմբերի համար ոչ միայն իր աշխարհագրական նպաստավոր դիրքով և արվեստասեր ու նրբանկատ հանդիսականով, այլև իր թատրոնով, որի հարմարավետությունն ու բեմադրական հնարավորությունները թերևս կարող էին բացառիկ համարվել ընդհանրապես այդ ժամանակաշրջանի հայ գավառական իրականության մեջ: Ճարտարապետորեն և տեխնիկապես թատրոնական բոլոր պահանջներին համապատասխանող այս շքեղաշուք կառույցը, որ գտնվել է Ղազանչեցոց եկեղեցու հարևանությամբ՝ Խանդամիրյանների սեփականությունը համարվող հողատարածքում, առաջին անգամ իր հյուրընկալ դռները բացեց 1891 թ. հուլիսի 7-ին՝ Մուրացանի «Ռուզան» ներկայացումով: Կազմակերպիչն էլ թատրոնի հիմնադիր Մկրտիչ (Նիկիտա) Խանդամիրյանն էր, որ սկզբնապես իր շուրջն էր համախմբել տեղի շնորհալի թատերասերներին և նրանց հորդորել հիմնավորապես նորոգելու Շուշվա թատերական կյանքը:

Մինչ այդ տեղի հասարակության համար արդեն վաղուց էր ավանդույթ դարձել պարբերաբար հաղորդակից լինել հայ նորագույն թատերական արվեստին, շփվել նրա լավագույն ներկայացուցիչների հետ: Դեռևս 1865-ին էր, երբ Չմշկյան-Ամերիկյան-Մանդինյան թատերախումբն առաջին անգամ այստեղ հանդես եկավ «Վարդան Սամիկոնյան», «Սամվել» և «Շկոլի վարժապետը» հյուրախաղային ներկայացումներով: Այդ ժամանակ շուշեցի հանդիսատեսն ուղղակի զարմացրել է

թիֆլիսահայ դերասաններին իր անմիջականությամբ՝ թատերախաղի պայմանականությունն ու իրականությունը չսահմանազատելով միմյանցից: «Շատերին թվում է, թե բեմից դուրս էլ գործ ունեն եթե ոչ իրական հերոսների, ապա նրանց դեսպանների հետ, մարդկանց, որոնց տրված է Աստծո հետ խոսելու իրավունք, և եկել են այդ մարդիկ հերոսացնելու Ղարաբաղի հայությանը: «Իմ քաջ զինվորներ», – ասում է Վարդան-Չմշկյանը, և դահլիճը կրկնում է. «Կեցցե Վարդան», – պատասխանում են զինվորները, դահլիճը դարձյալ կրկնում է: «Օ՞ն անդր, առաջ», – գոչում է բեմական Վարդանը, և հանդիսականը դա ընդունում է որպես իրական պայքարի կոչ, պատրաստվում է դուրս նետվել ընդդեմ թշնամու: Ներկայացումից հետո հանդիսականները ռազմաշունչ երգերով ու ջահերով դուրս են գալիս փողոց, մտածելով, որ եթե մի բան ասված է հրապարակավ ու բարձրաձայն, լինելու բան է: Հանդիսականը զինվորական նվագախմբի հետ միասին ուղեկցում է դերասաններին, երգելով Ձեյթունցիների երգը: Երգում են նաև Գևորգ Աբովյանի երգերը, որ գրված էին հատկապես պատմահայրենասիրական դրամաների համար: Յուրաքանչյուր երգից հետո հնչում են միահամուռ բացականչություններ՝ «կեցցե՛ ազգն հայոց», «կեցցե՛ սպարապետն Վարդան», «կեցցե՛ Չմշկյան», «կեցցե՛ Մանդինյան», «կեցցե՛ Ամերիկյան»: Բոլոր ներկայացումներն ավարտվում են այսպես և բազմամարդ խնջույքներով: Շուշիի երևելի քաղաքացիները պարտք են համարում օրը մեկի տանը խնջույք սարքել, ուր ներկայացման մասնակիցների հետ հավաքվում են և հանդիսականները... Երգում են, ճառում, կենացներ խմում ազատության, հավասարության, եղբայրության կոչերով»<sup>1</sup>:

Սա շուշեցու առաջին հանդիպումն էր նորագույն թատրոնի հետ և բեմահարթակից դրամայի ընկալման առաջին

<sup>1</sup> Գ. Հովհաննիսյան, Հայ թատրոնի պատմություն, XIX դ., Ե., 1996, էջ 416:

փորձը: Եվ ինչպես երևում է, այդ հիրավի պատմական իրադարձությունը վճռորոշ դեր խաղաց Շուշիի հետագա մշակութային կյանքում: Այսպես, 1873-ին Խանդամիրյաններն այստեղ կառուցում են քաղաքային ակումբ, որը հայտնի է եղել նաև «Խանդամիրյան թատրոն» անունով, քանի որ ի սկզբանե նախատեսվել է ոչ միայն հասարակական հավաքությունների, այլև թատերական ներկայացումների, պարային և երաժշտական համերգների համար (ըստ երևույթին, սա 91-ին կառուցած թատրոնական շենքի նախատիպն էր)<sup>2</sup>: Իսկ ահա 80–81 թվականներին դպրոցական միջավայրում կազմակերպվում են «Որդիական սեր կամ Ֆեոդորա», «Վարդանանց պատերազմ» և «Դալալ Ղաղո» ներկայացումները<sup>3</sup>:

Նույնքան նշանակալի երևույթ են դարձել նաև Պետրոս Աղամյանի հյուրախաղերը 1882-ին: Այս անգամ շուշեցի հանդիսականն առիթ է ունեցել ճաշակելու եվրոպական թատրոնի խաղացանկը՝ Շեքսպիրի «Յամլետն» ու Ջակոմետտիի «Ոճրագործի ընտանիքը»: Ներկայացումներն իրապես ցնցող տպավորություն են գործել: «Դեմքերի վրա շեքսպիրյան հանճարի հրճվանքն էր դրոշմվել, – գրել է Լեոն, որ այդ ժամանակ Շուշիում էր և աղամյանական խաղի ականատեսը, – արվեստի բարձր գաղափարների ու ճաշակի հետ էր կապել Աղամյանը տեղի հանդիսատեսին: Հրաշք գործած բեմական հանճարը դարձել էր ամբողջ քաղաքի սիրելին»<sup>4</sup>: Ուշագրավ է, որ դրամատուրգ Եկատերինա Բահաթուրի վկայությամբ, «Աղամյանը համակում էր ամենքին, հասցնում ինքնամոռացության, հիպնոսում»: «Ամբողջ դահլիճը ցնցվեց, – մտաբերել է նա, Կորրադոյի դերակատարման առիթով, – ամենքը, ինչպես մի մարդ ոտքի կանգնեցին, վայրկյան մի կարծես քարացան: Ես մոռացա, որ թատրոնում եմ, մոռացա, որ տաժանակիր աշխա-

տանքից փախած այդ ոճրագործը միմիայն հանճարեղ դերասան է...»<sup>5</sup>:

Ամիսներ անց, այստեղ հյուրախաղերի են գալիս նաև Սաֆրազյան ամուսինները՝ բավական հարուստ խաղացանկով. «Շուշանիկ», «Սանդուխտ կույս», «Սամվել», «Թուղթ խաղացողի կյանքը», «Խան Սարիբի վեզիրը», «Կըռթ-կըռթ» և այլն<sup>6</sup>: Հաջորդ՝ 1883 թվականից, թատերական կյանքն այստեղ էլ ավելի է աշխուժանում, ասպարեզ են գալիս սիրողական խմբեր, Աբրահամ Տեր-Գասպարյանի և Հովհաննես Գաղարբեկյանի նախաձեռնությամբ բեմադրվում են Գ. Սունդուկյանի «Պեպոն» (1883), «Քանդած օջախը», Թ. Ֆասուլյանյանի «Երկու քաղցածները» (1887), Ս. Տեր-Գրիգորյանի «Վույ քի իմ վեջեր» և «Ո՛վ է մեղավոր» (1883) վոդևիլները<sup>7</sup>:

Սակայն լիարժեք և կանոնավոր թատերական կյանքով Շուշին սկսում է ապրել 1880-ականների վերջին, երբ փարիզյան ուղևորությունից հետո քաղաք է վերադառնում Ս. Խանդամիրյանը: Ծագումով ազնվական այս երիտասարդը, որ ստացել էր եվրոպական չափանիշներին համապատասխան փայլուն կրթություն, դեռևս պատանեկան տարիներից էր հրապուրվել թատրոնով: Ֆրանսիայում ուսանելն էլ իր բարերար դերը կատարեց՝ նրա այդ հակումը դարձնելով ավելի որոշակի և հեռանկարային: XIX դարի 70–80-ական թվականներին, երբ երիտասարդ Խանդամիրյանը սկզբնապես գտնվել է Սարսելում՝ մետաքսի արտադրության մեջ մասնագիտանալու նպատակով, ինչպես պատվիրել էր հայրը, իհարկե չէր կարող անհաղորդ մնալ այն նշանակալի թատերական իրադարձություններին, որ տեղի էին ունենում Ֆրանսիայի մայրաքաղաքային կյանքում: Ինչպես գիտենք, այս ժամանակաշրջանում մի կողմից առանձնակի թափ է առնում փարիզյան մաս-

<sup>2</sup> Բ. Հարությունյան, XIX-XX դարերի հայ թատրոնի տարեգրություն (1801–1922), հ. 1, Ե., 1980, էջ 119:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 180, 200:

<sup>4</sup> Ռ. Ջարյան, Աղամյանի կյանքը, Ե., 1961, էջ 176:

<sup>5</sup> Բ. Խանդամիրյան, Ս. Հարությունյան, էջեր Շուշիի հայ թատրոնի անցյալից, Ե., 1978, էջ 7:

<sup>6</sup> Ստ. Սաֆրազյան, Շուշի. «Մեղու Հայաստանի», 1882, 16 սեպտեմբերի:

<sup>7</sup> Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 139–140, 291:

նավոր թատրոնների գործունեությունը, մյուս կողմից ձևավորվում են թատերական գեղագիտության նորագույն ըմբռնումները՝ այսպես կոչված նատուրալիզմն ու նեոռոմանտիզմը: Եվ հենց այստեղ էլ՝ մշակութային տարբեր հոսանքների հորձանուտում, էապես հարստացան նրա թատերական գիտելիքները, և հղկվեց գեղարվեստական ճաշակը: Գալով Շուշի, որն այդ ժամանակ ընդամենը Ռուսաստանի հարավային գավառներից մեկն էր, նա լծվում է իր վաղեմի երազանքն իրականացնելու գործին՝ թատերական կյանքի բարենորոգմանը: Միաժամանակ, նա հետևողականորեն շարունակում է պահպանել իր հոգևոր կապն առաջադեմ ու քաղաքակիրթ եվրոպական աշխարհի հետ: «Հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն լեզուներով կարդացող այդ թատերական գործիչը, – տարիներ հետո մտաբերել է որդին Բորիս Խանդամիրյանը, – իր գրադարանը հարստացնում էր հայկական ու ռուսական պարբերականներով ու գրականությամբ, Ֆրանսիայից ստանում էր պատկերազարդ «Իլյուստրացիոն» հրատարակությունը, որին կից առանձին հատորներով Շուշի էին գալիս Ջուլյայի, Մոլիերի, Ռուսոյի, Ստենդալի, Մոպասանի և այլ դասականների երկերը: Ֆրանսիայից նա իր հետ բերել էր հայագիտությանը վերաբերող գրականություն ևս: Նաև թարգմանիչ էր, ֆրանսերենից թարգմանել է ժորժ Օնեի «Դոկտոր Ռամոն»: Թարգմանություններ է արել նաև ռուսերենից: Հրատարակել է «Անձկության ժամեր» բանաստեղծությունների ժողովածուն, գրել է պիեսներ»<sup>8</sup>:

Վստահաբար կարելի է ասել, որ Շուշի վերադառնալիս Խանդամիրյանն արդեն որոշակի պատկերացում ունեցել է իր հետագա անելիքների մասին: Ահա թե ինչու, նախ նա անմիջապես իր շուրջն է համախմբել տեղի թատերասերների մեջ աչքի ընկած ուժերը և փորձել է ստեղծել մշտական գործող թատերախումբ: Այդ կազմից հայտնի են մի քանի ազգանուններ՝ Գ. Նազարյան, Ա. Աբրահամյան, Ա. Կոստանդյան, Օ. Թա-

<sup>8</sup> Բ. Խանդամիրյան, Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 12:

ռունյան, Ս. Միքայելյան, Գ. Իշխանյան, Ս. Դավթյան, դերասանուհիներ՝ Գ. Թառունյան, Գ. Աթաբեկյան, Գ. Գյանջեցյան<sup>9</sup>: Մի-րողական այս խմբի գործունեությունը նախապես ծավալվել է հայոց թեմական և հոգևոր ուսումնարաններում: Հենց այդ ժամանակ էլ, ըստ երևույթին, Խանդամիրյանը ձեռնամուխ է եղել թատրոնական շենք կառուցելու իր նախագծի իրագործմանը: Ուշագրավ է, որ զուգահեռաբար նա հանդես է եկել ոչ միայն իբրև թատերական գործի հմուտ կազմակերպիչ, այլև ռեժիսոր՝ խաղացանկում ընդգրկելով ինչպես հայրենական, այնպես էլ եվրոպական դրամատուրգիայի գործեր՝ Գ. Սունդուկյանի («Էլի մեկ գոհը» – 1889, «Պեպոն» – 1890, «Խաթաբալան» – 1890), Գ. Կարենյանի («Վարդանանց պատերազմը» – 1890), Խ. Գալֆայանի («Արշակ Բ» – 1891), Միքայել Տեր-Գրիգորյանի («Ես էլ քի մոցիքություն» – 1890, «Պեպոյի տկճուրը» – 1891), Ն. Փոլդինյանի («Դալալ Դադոն» – 1889), Վ. Մադաթյանի («Կըռք-Կըռքը» – 1890), Էմին Տեր-Գրիգորյանի («Կռվապատժառը ես էի» – 1890) և Մոլիերի («Բռնի ամուսնությունը» – 1890) պիեսները<sup>10</sup>:

Վերջապես, 1891-ին Մուրացանի «Ռուզան» ներկայացումով իր գործունեության սկիզբն է նշանավորում Շուշիի նորակառույց թատրոնը: Պետք է ասել, որ պիեսի ընտրության մեջ էլ Խանդամիրյանն իրեն դրսևորել է իբրև լայնախոհ և թատրոնական գործին քաջատեղյակ անձնավորություն: Արցախյան իրականությանը վերաբերող և նեոռոմանտիզմի ոգով ներշնչված դրամատիկական երկի բեմադրությունն այստեղ նշանակալից երևույթ էր ոչ միայն իր հայրենասիրական հնչեղությամբ, այլև թատերական ասպարեզում իրապես պրոֆեսիոնալ մոտեցում դրսևորելու առումով. չէ՞ որ ի վերջո ազգային դրամատուրգիան է կանխորոշում ազգային թատրոնի դիմագիծը: Հայ մամուլն էլ չի հապաղել արձագանքելու այդ իսկապես պատմական իրողությանը: Այսպես, «Տարագի»

<sup>9</sup> Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 417:

<sup>10</sup> Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 316, 323, 325, 330, 332, 340:

թղթակիցը գրել է. «Հուլիսի 7-ին, Շուշիում թատերասերները հոգուտ Շուշու բարեգործական ընկերության ներկայացրին «Ռուզան» պիեսը՝ պարոն Ն. Խանդամիրյանի թատրոնական նորակառույց դահլիճում: Դահլիճը, բեմը, որի վրա առաջին ներկայացումն այդ օրն էր, կարգ ու սարքը, հարմարությունները Շուշում չտեսնված բաներ են: Առաջին ներկայացմանը դահլիճը լիքն էր: Մի տոմսակ անգամ չէր մնացել և շատերը ձեռնունայն հետ էին դառնում թատրոնից: Տիկին Ն. Յարամիշյան-Ռուզանը բեմին կենդանություն էր տալիս: Նա կատարյալ ֆուրոր արավ հասարակության մեջ: Ինչպես երևում էր, տիկինը շատ էր աշխատել իր դերի վրա և հենց այդ պատճառով սար ու ձորի հեռավորություն կար նրա և խաղացողների միջև, որոնք սովորաբար մեկնվում էին բեմի անկյունում և խոսում էին եկեղեցու փոխասացների մասն: Տիկին Յարամիշյանի պես աշխույժով խաղացողը միշտ կարող է գավառական բեմի զարդ համարվել»<sup>11</sup>: Եվ թեպետ, հետագայում տեղացի դերասանական ուժերից կազմված խումբն այդպես էլ չի դարձել պրոֆեսիոնալ բառիս բուն իմաստով, այնուամենայնիվ նրա առկայությունն էապես նպաստել է հյուրախաղային ներկայացումների կազմակերպման գործին: Իսկ դրանք 90-ականներից ի վեր սկսում են ավելի հաճախակի երևոյթ դառնալ Շուշվա իրականության մեջ: Շուշիի թատրոնն իբրև հյուրախաղային կենտրոն դառնում է ավելի կարևոր, քան Ալեքսանդրապոլի և Երևանի թատրոնները<sup>12</sup>:

Նախ և առաջ, դա պայմանավորված էր Խանդամիրյան թատրոնի գոյությամբ, որ Թիֆլիսից ու Բաքվից հետո արևելահայ իրականության մեջ հիրավի կարող էր եզակի երևոյթ համարվել: Թատրոնն ուներ այդ ժամանակաշրջանի բոլոր նորագույն տեխնիկական պահանջներին համապատասխանող բեմահարթակ, զեղեցիկ և ընդարձակ դահլիճ, սրան կից լայն ու հարմարավետ ճեմասրահ: Այդ շենքում, որտեղ էլ ապ-

րում էր թատրոնատերն իր ընտանիքով, նախատեսված էր նաև հանրակացարան դերասանների համար, որին դրսից հարում էր մրգատու ծառերով պարտեզը: Խանդամիրյանի դատեր՝ Ադելինայի պատմելով, «...թատրոնը քարաշեն էր, դրսի կողմից երկհարկանի, բակից՝ մասամբ եռահարկ, ուր պահվում էին ղեկորները, բուտաֆորիան, ռեկվիզիտը, թատրոնական այլ պարագաներ՝ պատվիրված անձամբ թատրոնատիրոջ կողմից և պատրաստված նրա ճաշակով ու անմիջական մասնակցությամբ: Դեկորների օգտագործումը մեքենայացված էր, դերասաններն ունեին իրենց հարդասենյակները: Շենքի առաջին հարկում ապրում էր Խանդամիրյանն իր ընտանիքով: Այդ հարկում էր գտնվում նաև թատրոնի գրադարանը: Դահլիճն ուներ 350 աթոռ՝ պարտեր, օթյակներ, ամֆիթատրոն: Այն լուսավորվում էր նավթի լամպերով: Շենքն ու ներկայացումները սպասարկում էին Խանդամիրյանի կողմից պատրաստված մարդիկ, որոնց աշխատավարձը վճարում էր ինքը՝ Խանդամիրյանը, թատրոնի եկամուտներից: Շենքը տրվում էր վարձով՝ նախապես կայացված համաձայնությամբ»<sup>13</sup>:

Գրիգոր Ավետյանը, որ ժամանակին հաճախ է առիթ ունեցել լինելու այստեղ, առանձնակի ջերմությամբ է արտահայտվել այդ թատրոնի մասին. «Նիկիտա Խանդամիրյանի թատրոնը, որը շնորհիվ իր տիրոջ, աչքի էր ընկնում իր սարք ու կարգով, իր մաքրությամբ, մանավանդ տիրոջ կողմից դեպի դերասաններն ունեցած սիրով ու հարգանքով – այս ամենը Շուշու Խանդամիրյանի թատրոնը դարձրել էր մեզ համար մի ուխտատեղի, և ամեն ամառ շտապում էինք օր առաջ գնալ ու մեր սիրելի Նիկիտա Աբրամիչին տեսնել: Արտասովոր մի մարդ էր նա, երկար ժամանակ Փարիզում էր ապրել և այնտեղից հետը բերել մաքրություն, խստություն ու ճշմարտութ-

<sup>11</sup> Բ. Խանդամիրյան, Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 23:

<sup>12</sup> Գ. Ռուսնիսյան, նշվ. աշխ., էջ 418:

<sup>13</sup> Բ. Խանդամիրյան, Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 11–12:

յուն՝ դեպի ամեն ինչ և ամենքի վերաբերմամբ»<sup>14</sup>։ Այդպիսով, ստեղծվել էր պարբերաբար Շուշի այցելող դերասանների մի խումբ, որոնց թվում էին Գրիգոր Աբրահամյանը, Մաթեոս Աղայանը, Մարի Ջաբելը, Վարվառա Մելիքյանը, Արշակ Հարությունյանը և ուրիշներ։ «Դարավերջին Շուշի այցելող խմբերը ղեկավարել է այնպիսի մի պրոֆեսիոնալ դեմք, ինչպիսին էր Գևորգ Պետրոսյանը։ Շուշիի բեմում շատ է ծափահարվել հայ շրջիկ խմբերի առաջնուհին՝ Փառանձեմը (Սահակյան-Սաղաթելյան)։ Այս բեմում հաճախ են խաղացել պոլսեցի Մարի և Վարդիթեր Ֆելեկյանները և գուցե ամենից ավելի՝ Արամ Վրույրը Մարի Ջաբելի հետ»<sup>15</sup>։ Մինչև 1905 թվականը, մինչև տեղի հայ բնակչության կոտորածներն ու քաղաքի հրդեհումը, որին զոհ գնացին բազմաթիվ մշակութային հուշարձաններ և դրանց թվում նաև Խանդամիրյան թատրոնը, Շուշին այն եզակի գավառական քաղաքներից էր, որն իրավամբ կարող էր պարծենալ բովանդակությամբ հագեցած և կանոնավոր հիմքերի վրա դրված իր թատերական կյանքով։ Այդ ժամանակաշրջանում չի եղել քիչ թե շատ նշանավոր մի հայ դերասան, որ գոնե մեկ անգամ հյուրախաղերով այստեղ հանդես եկած չլիներ։ Վերոհիշյալ դերասաններից բացի, Շուշի հաճախ են այցելել Գովհաննես Աբելյանը, Սիրանույշը, Սաթենիկ Աղամյանը, Գովհաննես Ջարիֆյանը և ուրիշներ։

Տասնվեց տարի շարունակ ու անընդմեջ աշխատելով ի նպաստ հայ ժողովրդի և նրա թատերական մշակույթի բարգավաճման՝ Շուշիի Խանդամիրյան թատրոնը թերևս այսօր էլ շարունակեր գործել նույնքան արդյունավետ ու եռանդուն, եթե տեղի չունենային 1905-ի ամռան այն սահմուկեցուցիչ իրադարձությունները, որոնց զոհ գնաց տեղի ողջ հայ բնակչությունն իր պատմական արժեքներով հանդերձ։ Այդ օրհասական դեպքերը հետագայում այսպես է վերհիշել հայ

<sup>14</sup> Գ. Ավետյան, Քառասուն և հինգ տարի հայ բեմի վրա, Ե., 1933, էջ 134-136։

<sup>15</sup> Գ. Գովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 418։

մեծ դերասան և ծնունդով շուշեցի Վաղարշ Վաղարշյանը. «Ես տեսա, թե ինչպես բորբոքուն, ահռելի մի բոց հարևան տնից սողաց դեպի Խանդամիրյան թատրոնը, տանիքն առավ իր կործանարար ճարճատյունի մեջ, և շենքը սկսեց բոցավառվել։ Կարծես ոչ ոք չէր տեսնում այդ կործանարար աղետը, որ գնար օգնության։ Ես ճչալով փորձ արի վազել դեպի բոցավառվող թատրոնը, հրացանավոր մի մարդ բռնեց թևիցս և ինձ շարտելով բակի մի անկյունը, հրամայեց չչարժվել։ Թատրոնի շենքը անտեր ու անօգնական իմ աչքի առաջ ճարճատուն էր բոցերի լափից։ Մի թե չէր կարելի փրկել այն։ Մի թե այն գեղեցիկ լուսավոր սրահը, այն աթոռներն ու ջահերը, այն բեմն ու վարագույրը, այն «անտառներն ու պալատները» պետք է բոցկլտային ու մոխրանային հրդեհի երախում։ Մի թե թատրոն ասած բանը վերանալու է իմ կյանքից...»<sup>16</sup>։ Նույնպիսի ցավագին հույզերով ու մտքերով էր տոգորված այդ դժոխակ օրերին ողջ հայ ժողովուրդը, որին անողոքաբար սրախողխող էին անում ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեպես և թերևս հենց դա էր ամենասոսկալին ու ողբերգականը։

Այսպիսով, իրավամբ կարելի է ասել, որ անգնահատելի է Խանդամիրյան թատրոնի դերն ու նշանակությունը հայ թատերական մշակույթի պատմության մեջ։ Կառուցվելով XIX դարավերջի նորագույն բեմադրական պահանջներին համապատասխան, իր գործունյա ու բանիմաց հիմնադրի ջանքերի շնորհիվ, այն իրապես դարձավ արևելահայ միջավայրի նշանավոր թատերական կենտրոններից մեկը, ուր ժամանակին հյուրախաղերով հանդես են եկել բոլոր ճանաչված թատերախմբերն ու առաջնակարգ դերասանները։ Շուշին այն նշանավոր հայկական քաղաքներից էր, որ անմիջապես արձագանքել է բոլոր թատերական նորարարություններին ու գեղարվեստական բարձր արժեքներին, և հենց դրանով է առավելապես կարևորվում նրա պատմական առաքելությունը։

<sup>16</sup> Վ. Վաղարշյան, Ընկերներս, բարեկամներս և ես, գիրք Ա, Ե., 1959, էջ 53-54։